Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-169[2]-27.10.2017-ՊԱ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

<<ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. <<Ռազմական ոստիկանության մասին>> Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի ՀՕ-13-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում <<օրենքով>> բառից հետո լրացնել <<, այլ օրենքներով>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ կետով.

<<5) կայազորային մեկուսարանների և կայազորային կարգապահական վաշտերի գործունեությունը, ինչպես նաև այն զինծառայողների անվտանգությունը, որոնց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառվել է պաշտպանության միջոց:>>:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 5-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասում <<տարածքային>> բառից առաջ լրացնել <<կենտրոնական մարմնից, կենտրոնական մարմնի ենթակայության ստորաբաժանումներից,>> բառերը,

2. 3-րդ մասի երկրորդ պարբերությունում <<լիազոր մարմնի ղեկավարի ներկայացմամբ>> բառերը փոխարինել <<Հայաստանի Հանրապետության վարչապետի առաջարկությամբ>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 4. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1. 1-ին մասում <<օրենքով>> բառից հետո լրացնել <<և այլ օրենքներով>> բառերը,

2. 2-րդ մասի երկրորդ նախադասությունում <<լիազոր մարմնի ղեկավարը>> բառերը փոխարինել <<Հայաստանի Հանրապետության կառավարությունը>> բառերով,

3. ուժը կորցրած ճանաչել 3-րդ մասը.

4. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ և 5-րդ մասեր.

<<4. Ռազմական ոստիկանության պաշտոնների համար սահմանվում է պաշտոնի անձնագիր, որը ներառում է տվյալ պաշտոնը զբաղեցնող ռազմական ոստիկանության ծառայողի համար սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված իրավունքների ու պարտականությունների նկարագիրը և տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ռազմական ոստիկանության ծառայողին մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տեսանկյունից ներկայացվող պահանջները: Ռազմական ոստիկանության

պաշտոնների անձնագրերը սահմանում է լիազոր մարմնի ղեկավարը՝ ռազմական ոստիկանության պետի ներկայացմամբ:

5. Ռազմական ոստիկանության ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների գնահատման, զբաղեցրած պաշտոնին համապատասխանության և առաջխաղացման հեռանկարը որոշելու նպատակով կատարվում է ատեստավորում, որի անցկացման կարգն ու պայմանները սահմանում է լիազոր մարմնի ղեկավարը:>>:

ՀՈԴՎԱԾ 5. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ և 4-րդ կետերով.

<<3) իրականացում է օրենքով վերապահված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննություն.

4) իրականացում է զինված ուժերի տրանսպորտային միջոցների, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նաև այլ տրանսպորտային միջոցների ուղեկցում:>>:

ՀՈԴՎԱԾ 6. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 11.1-րդ հոդվածով.

<<ՀՈԴՎԱԾ 11.1. ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՅԱԶՈՐԱՅԻՆ ՄԵԿՈՒՍԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՅԱԶՈՐԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՇՏԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1. Ռազմական ոստիկանությունն ապահովում է կայազորային մեկուսարանների գործունեությունը՝ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով ու <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով քրեակատարողական հիմնարկների ու ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրերի վարչակազմերի գործունեությունը սահմանող պահանջներին համապատասխան: Կայազորային մեկուսարանների գործունեության ապահովման շրջանակներում ռազմական ոստիկանությունն իրականացնում է կայազորային մեկուսարաններից օրենքով սահմանված դեպքերում ժամկետային պարտադիր զինծառայողներին հետագա ծառայությունը շարունակելու համար նշանակված զորամասեր տեղափոխումը՝ լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով:

2. Ռազմական ոստիկանությունն ապահովում է կայազորային կարգապահական վաշտերում օրենքով սահմանված կարգով գտնվող զինծառայողների կողմից օրվա խստացված ռեժիմով ծառայության իրականացումը՝ <<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով համապատասխան պաշտոնատար անձանց գործունեությունը սահմանող պահանջներին և օրվա խստացված կարգացուցակին համապատասխան:

3. Ռազմական ոստիկանությունն ապահովում է այն զինծառայողների անվտանգությունը, որոնց նկատմամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով ձեռնարկվել է պաշտպանության միջոց՝ ծառայության վայրը փոփոխելու ձևով, պաշտպանության միջոցի ձեռնարկման ժամանակահատվածում զինծառայողի զինվորական ծառայությունն օրենքով սահմանված կարգով իրականացնելով ռազմական ոստիկանության ենթակա զորամասում:>>:

ՀՈԴՎԱԾ 7. Օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասում <<զինվորական>> բառը փոխարինել <<ռազմական>> բառով:

ՀՈԴՎԱԾ 8. Օրենքի 18-րդ հոդվածը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<ՀՈԴՎԱԾ 18. ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Ռազմական ոստիկանության ծառայողի սոցիալական, այդ թվում՝ կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:>>:

ՀՈԴՎԱԾ 9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն օրենքը, բացառությամբ 3-րդ հոդվածի 2-րդ մասի, ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 133-րդ հոդվածն ուժի մեջ մտնելու օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2006 թվականի դեկտեմբերի 21-ին

ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն օրենքը կարգավորում է ռազմական ոստիկանության հասկացությունը, խնդիրները, գործունեության սկզբունքները, լիազորությունները եւ կառուցվածքը, ռազմական ոստիկանության ծառայողի իրավական ու սոցիալական ապահովության պետական երաշխիքները, ինչպես նաեւ ռազմական ոստիկանության ֆինանսավորման, նյութատեխնիկական ապահովման եւ գործունեության վերահսկման կարգը:

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 1. ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Ռազմական ոստիկանությունը գործում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) համակարգում եւ կոչված է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում (այսուհետ՝ զինված ուժեր) իրականացնելու սույն օրենքով իրեն վերապահված խնդիրները:

2. Ռազմական ոստիկանությունը՝ որպես առանձին զորամիավորում, մասնակցում է Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը:

ՀՈԴՎԱԾ 2. ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Ռազմական ոստիկանության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, սույն օրենքով***, այլ օրենքներով*** եւ այլ իրավական ակտերով:

ՀՈԴՎԱԾ 3. ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ռազմական ոստիկանության գործունեությունն իրականացվում է օրինականության, անձի իրավունքները եւ ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, օրենքի առջեւ բոլորի հավասարության, մարդասիրության եւ հրապարակայնության, ինչպես նաեւ կենտրոնացված կառավարման ու միանձնյա ղեկավարման սկզբունքների հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 4. ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ռազմական ոստիկանությունը, օրենքին համապատասխան, ապահովում է՝

1) հետաքննության իրականացումը զինված ուժերում՝ զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաեւ այն արարքների վերաբերյալ գործերով, որոնք կատարվել են զորամասի տարածքում կամ վերագրվում են ժամկետային ծառայության զինծառայողներին.

2) զինծառայողների կողմից նախապատրաստվող կամ կատարվող հանցագործությունների նախականխումը, կանխումը եւ խափանումը.

3) լիազոր մարմնին ամրացված պետական գույքի պահպանությունը.

4) զինված ուժերի տրանսպորտային միջոցների նպատակային շահագործումը եւ անվտանգ երթեւեկությունը,

5) կայազորային մեկուսարանների և կայազորային կարգապահական վաշտերի գործունեությունը, ինչպես նաև այն զինծառայողների անվտանգությունը, որոնց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառվել է պաշտպանության միջոց:

2. Ռազմական ոստիկանությունը, իր խնդիրներին համապատասխան, աջակցում է զինված ուժերում օրինականության եւ կարգապահության ամրապնդմանը, զորամասերում ու զինվորական կառավարման մարմիններում անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի ուսումնասիրմանը եւ իրավագիտակցության բարձրացմանը:

3. Ռազմական ոստիկանությունն իր խնդիրներն իրականացնելիս համագործակցում է իրավապահ մարմինների հետ:

4. Ռազմական ոստիկանության առջեւ այլ խնդիրներ կարող են դրվել միայն օրենքով:

ՀՈԴՎԱԾ 5. ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

1. Ռազմական ոստիկանության կառուցվածքն ու անձնակազմի թվակազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ լիազոր մարմնի ներկայացմամբ:

2. Ռազմական ոստիկանությունը բաղկացած է ***կենտրոնական մարմնից, կենտրոնական մարմնի ենթակայության ստորաբաժանումներից,*** տարածքային (ըստ կայազորների) բաժիններից եւ դրանց ենթակա տեղական բաժանմունքներից:

3. Ռազմական ոստիկանության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է լիազոր մարմնի ղեկավարը:

Ռազմական ոստիկանության անմիջական ղեկավարումն իրականացնում է ռազմական ոստիկանության պետը, որին պաշտոնի նշանակում եւ պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ ~~լիազոր մարմնի ղեկավարի ներկայացմամբ~~ ***Հայաստանի Հանրապետության վարչապետի առաջարկությամբ***:

ՀՈԴՎԱԾ 6. ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1. Ռազմական ոստիկանության ծառայողը լիազոր մարմնի համակարգում զինվորական ծառայություն անցնող զինծառայող է, որն իրականացնում է ռազմական ոստիկանության՝ սույն օրենքով ***և այլ օրենքներով*** սահմանված խնդիրներն ու լիազորությունները:

2. Ռազմական ոստիկանության ծառայողին տրվում է ծառայողական վկայական, հաշվառման մետաղանիշ, ինչպես նաեւ համազգեստ, որը կարող է ունենալ հատուկ տարբերանշաններ (կրծքանշանի, թեւկապի կամ այլ ձեւով): Համազգեստի եւ հատուկ տարբերանշանների ձեւն ու կրման կարգը հաստատում է ~~լիազոր մարմնի ղեկավարը~~ ***Հայաստանի Հանրապետության կառավարությունը***:

Ռազմական ոստիկանության ծառայող չհամարվող անձի կողմից ռազմական ոստիկանության ծառայողի համազգեստի, ծառայողական վկայականի կամ հատուկ տարբերանշանի օգտագործումն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

~~3. Ռազմական ոստիկանությունում ծառայությունը համարվում է զինվորական ծառայություն, որը կարգավորվում է "Զինվորական ծառայություն անցնելու մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով:~~

4. Ռազմական ոստիկանության պաշտոնների համար սահմանվում է պաշտոնի անձնագիր, որը ներառում է տվյալ պաշտոնը զբաղեցնող ռազմական ոստիկանության ծառայողի համար սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված իրավունքների ու պարտականությունների նկարագիրը և տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ռազմական ոստիկանության ծառայողին մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տեսանկյունից ներկայացվող պահանջները: Ռազմական ոստիկանության պաշտոնների անձնագրերը սահմանում է լիազոր մարմնի ղեկավարը՝ ռազմական ոստիկանության պետի ներկայացմամբ:

5. Ռազմական ոստիկանության ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների գնահատման, զբաղեցրած պաշտոնին համապատասխանության և առաջխաղացման հեռանկարը որոշելու նպատակով կատարվում

է ատեստավորում, որի անցկացման կարգն ու պայմանները սահմանում է լիազոր մարմնի ղեկավարը:

ՀՈԴՎԱԾ 10. ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼԻՍ

1. Ռազմական ոստիկանությունը օրենքի շրջանակներում՝

1) իրականացնում է զինված ուժերի տրանսպորտային միջոցների գրանցում եւ հաշվառում.

2) կազմակերպում եւ անցկացնում է զինված ուժերի տրանսպորտային միջոցների, դրանց կցորդների պետական տեխնիկական զննում,

3) իրականացում է օրենքով վերապահված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննություն.

4) իրականացում է զինված ուժերի տրանսպորտային միջոցների, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նաև այլ տրանսպորտային միջոցների ուղեկցում:

2. Զինված ուժերի տրանսպորտային միջոցները վարող անձանց կողմից ճանապարհային երթեւեկության անվտանգությանն սպառնալու կամ դրա կանոնները խախտելու դեպքում ռազմական ոստիկանությունն իրավունք ունի՝

1) կանգնեցնելու զինված ուժերի տրանսպորտային միջոցները, ստուգելու երթեւեկելու իրավունք վերապահող եւ փոխադրվող բեռի փաստաթղթերը եւ կազմելու արձանագրություններ.

2) արգելելու զինված ուժերի տեխնիկապես անսարք եւ երթեւեկության անվտանգությանն սպառնացող տրանսպորտային միջոցների շահագործումը.

3) զննելու զինված ուժերի տրանսպորտային միջոցները, ինչպես նաեւ փոխադրվող բեռը.

4) արգելանքի վերցնելու զինված ուժերի՝ հետախուզման մեջ գտնվող եւ հայտնաբերված տրանսպորտային միջոցները.

5) մեկուսացնելու զինված ուժերի տրանսպորտային միջոցներն անսթափ վիճակում վարող, ինչպես նաեւ զինված ուժերի տրանսպորտային միջոց վարելու կամ դրանից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր չունեցող անձանց՝ արգելանքի վերցնելով տրանսպորտային միջոցը, իսկ բեռների առկայության դեպքում՝ ապահովելու դրանց պահպանումը:

3. Ռազմական ոստիկանությունը հսկողություն է իրականացնում զինված ուժերի տրանսպորտային միջոցների տեխնիկական սարքինության եւ անվտանգ շահագործման կանոնների պահպանման, դրանց նպատակային օգտագործման նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 11. ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

Ռազմական ոստիկանությունն իրավապահ մարմինների հետ համագործակցության շրջանակներում՝

1) գրավոր հարցման դեպքում իրավապահ մարմիններին տրամադրում է հետաքրքրող տեղեկատվություն.

2) աջակցում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ դատավարական գործողությունների անցկացմանը, զինծառայողների նկատմամբ կատարվող հանցագործությունների եւ այլ իրավախախտումների կանխման, նախականխման, խափանման, հայտնաբերման ու բացահայտման աշխատանքների իրականացմանը.

3) իրավապահ մարմիններին տեղեկացնում է ռազմական ոստիկանության կողմից բացահայտված պետության, հասարակության կամ քաղաքացիների անվտանգությանն սպառնացող վտանգի մասին:

ՀՈԴՎԱԾ 11.1. ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՅԱԶՈՐԱՅԻՆ ՄԵԿՈՒՍԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՅԱԶՈՐԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՇՏԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

***1.** Ռազմական ոստիկանությունն ապահովում է կայազորային մեկուսարանների գործունեությունը՝ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով ու <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով քրեակատարողական հիմնարկների ու ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրերի վարչակազմերի գործունեությունը սահմանող պահանջներին համապատասխան: Կայազորային մեկուսարանների գործունեության ապահովման շրջանակներում ռազմական ոստիկանությունն իրականացնում է կայազորային մեկուսարաններից օրենքով սահմանված դեպքերում ժամկետային պարտադիր զինծառայողներին հետագա ծառայությունը շարունակելու համար նշանակված զորամասեր տեղափոխումը՝ լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով:*

***2.** Ռազմական ոստիկանությունն ապահովում է կայազորային կարգապահական վաշտերում օրենքով սահմանված կարգով գտնվող զինծառայողների կողմից օրվա խստացված ռեժիմով ծառայության իրականացումը՝ <<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով համապատասխան պաշտոնատար անձանց գործունեությունը սահմանող պահանջներին և օրվա խստացված կարգացուցակին համապատասխան:*

***3.** Ռազմական ոստիկանությունն ապահովում է այն զինծառայողների անվտանգությունը, որոնց նկատմամբ քրեական վարույթ իրականացնող մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով կիրառվել է ծառայության վայրը փոփոխելը պաշտպանության միջոց՝ պաշտպանության միջոցի կիրառման ժամանակահատվածում զինծառայողի զինվորական ծառայությունն օրենքով սահմանված կարգով իրականացնելով ռազմական ոստիկանության ենթակա զորամասում:*

ԳԼՈՒԽ 4

ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 17. ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

1. Ռազմական ոստիկանության ծառայողը գտնվում է օրենքի եւ պետության պաշտպանության ներքո: Օրենքով չլիազորված մարմինների կամ պաշտոնատար անձանց միջամտությունը ռազմական ոստիկանության գործունեությանն արգելվում է:

2. Ռազմական ոստիկանության ծառայողի օրինական պահանջների կատարումը պարտադիր է զինված ուժերի բոլոր զինծառայողների համար: Դրանք չկատարելը կամ ռազմական ոստիկանության ծառայողի պարտականությունների կատարմանը խոչընդոտելն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

3. Ռազմական ոստիկանության ծառայողն իր պարտականությունները կատարելիս ենթարկվում է միայն իր հրամանատարին (պետին): Արգելվում է ռազմական ոստիկանության ծառայողին ստիպել կատարելու սույն օրենքով եւ այլ իրավական ակտերով իրեն չվերապահված լիազորություններ:

4. Պետերից (անմիջական կամ ուղղակի) կամ այլ լիազորված պաշտոնատար անձանցից օրենքին հակասող հրամաններ ստանալիս ~~զինվորական~~ ***ռազմական*** ոստիկանության ծառայողը պարտավոր է ղեկավարվել միայն օրենքով եւ այդ մասին տեղյակ պահել վերադասին:

5. Ակնհայտ անօրինական հրամանով կամ կարգադրությամբ դիտավորյալ հանցանք կատարած ռազմական ոստիկանության ծառայողը, ինչպես նաեւ անօրինական հրաման կամ կարգադրություն տվող պաշտոնատար անձը պատասխանատվություն են կրում ընդհանուր հիմունքներով, իսկ անօրինական հրամանը կամ կարգադրությունը չկատարելը բացառում է պատասխանատվությունը:

~~ՀՈԴՎԱԾ 18. ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ~~
~~ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ~~

~~1. Ռազմական ոստիկանության ծառայողների սոցիալական ապահովությունը երաշխավորվում, իսկ ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում զոհված (մահացած) կամ մարմնական վնասվածքներ ստացած ռազմական ոստիկանության ծառայողների սոցիալական~~

~~երաշխիքները կարգավորվում են "Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով եւ այլ իրավական ակտերով:~~

~~2. Ռազմական ոստիկանության ծառայողները ենթակա են կյանքի պարտադիր պետական ապահովագրման՝ օրենքով սահմանված կարգով:~~

ՀՈԴՎԱԾ 18. ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Ռազմական ոստիկանության ծառայողի սոցիալական, այդ թվում՝ կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 19. ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Ռազմական ոստիկանության ֆինանսավորումը եւ նյութատեխնիկական ապահովումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին: